ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
АЙГЕКСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
Էլ.փոստ gyuxaygek@mail.ru
Հեռ. 0231-6-57-60

«04» 03 2014թ.

N 30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Ղահրամանյան*

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1]-րդ հոդվածի 1-ին մասի՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարի կողմից փետրվար ամսվա ընթացքում ընդունած որոշումները: Արձակած կարգադրություններ չկան:

Առդիր՝ 3 թերթ:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
հեռ. 0231-6-57-60

# ՈՐՈՇՈՒՄ

«03» փետրվարի 2014 թվականի N 01

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 2-րդ մասով՝ *որոշում եմ.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի աշխատողներին տրամադրվող ամենամյա արձակուրդների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2014 թվականի փետրվարի 3
գ. Այգեկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեկ գյուղական
համայնքի ղեկավարի
2014 թվականի փետրվարի «03»-ի N 01 որոշման

# ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

## ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ

| N | Աշխատողի ազգանունը, անունը, հայրանունը | Պաշտոնը | Արձակուրդի տրամադրման ամիսը |
|---|---|---|---|
| 1 | Աբրահամյան Վարուժան Շիղանի | համայնքի ղեկավար | օգոստոս |
| 2 | Աբրահամյան Մայիս Երվանդի | համայնքի ղեկավարի տեղակալ | հունիս |
| 3 | Սարգսյան Գայանե Վանիկի | գ/պետարանի աշխ.քարտուղար | հուլիս |
| 4 | Թորոսյան Սուսաննա Արշալույսի | առաջատար մասնագետ | օգոստոս |
| 5 | Եղիազարյան Քնարիկ Արմենի | 1-ին կարգի մասնագետ | սեպտեմբեր |
| 6 | Հովհաննիսյան Գոհար Սմբատի | 2-րդ կարգի մասնագետ | հոկտեմբեր |
| 7 | Հակոբյան Նարինե Համլետի | հավաքարար | նոյեմբեր |
| 8 | Խաչատրյան Ռաֆայել Վարուժանի | կոմունալ ծառայող | դեկտեմբեր |
| 9 | Ավագյան Սեյրան Ասատուրակի | օժանդակ բանվոր | դեկտեմբեր |

Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Գայանե Սարգսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
հեռ. 0231-6-57-60

## ՈՐՈՇՈՒՄ

«22» փետրվարի 2014 թվականի N 02

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՌԵԺԻՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «բ» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի 2014 թվականի փետրվարի 12-ի N 01/04/465-14 գրությունը և համայնքի ավագանու 2014 թվականի փետրվարի 21-ի N8 որոշումը՝ *որոշում եմ.*

1. Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի գերեզմանատան իրավական բաց ռեժիմ՝ համայնքի բնակչության համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2014 թվականի փետրվարի 22
գ. Այգեկ